բերութիւնները ամենաբարեկամական էին համարվում, որովհետև անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնական Ջորջ Դիլի բարեկամ էր Գամբետտայի հետ։ Այժմ Դիլի փարիզից անցնելով, չայցելից Գամբետտային։ Ասում են, որ դրանց յարաբերութիւնները վատացել են առևտրական գաշնագրի պատճառով։ Դիլն, յուսալով Գամբետտայի օգնութեան վրա, հաւատացնում էր, որ առևտրական բանակցութիւնները Ֆրանսիայի հետ աջողութեամբ կը վերջանան, մինչդեռ հակառակը պատահեց։ Գամբետտա իր կողմից աշխատում էր կատարել իր խոստմունքը, բայց այդ նա շատ ուշ արաւ։ Գամբետտայի մինիստրութեան կազմելը մինչև այժմ խորհրդակցութիւններ առաջարկ է։ Նորերումս Բուրբոնների պալատի մէջ հանրապետական միութեան և ձախակողմեանների ժողով կայացաւ, որին ներկայ էր և Գամբետտա։ Նոր մինիստրութեան մասին առաջարկած հարցին Գամբետտա կողմնակի պատասխան տուեց, թէպէտ մի քանի պատգամաւորներ բացարձակ նրան յայտնեցին, որ նա իր ձեռքն առի իշխանութիւնը հանրապետութեան շահերը պաշտպանելու համար։

Ցունիսի մէջ դժուարութիւնները մեծ չափեր են ստանում, չը նայելով, որ բէյլը ազատված է իր սիրելի Մուստաֆա-փաշայից, որ այժմ Փարիզի մէջն է։ Նրա յաջորդից շատ բան են սպասում։ Ֆրանսիական մինիստրատեղապահ Բուսան ընդգիմադրում է Ցունիսը վերջնականապէս Ֆրանսիայի հետ միացնելու գործին։

ԵԳԻՊՏՈՍ

Լուր է տարածված, որ Բ. Դուրը մտադիր է ուղարկել Եգիպտոս Սերվիր-փաշային իբրև Բ. Դրան արտաքոյ կարգի հաւատարմատար։ «Paris» լրագրի Կայիրէի թղթակիցը հաղորդում է իր խօսակցութիւնը Եգիպտական ապստամբների առաջնորդ Արաբի-բէյի հետ, որը ասել է, թէ Եգիպտական ապստամբութիւնը ոչինչով չէ սպառնում եւրօպացիներին։ Նա աւելացրել է, որ ինքը պատասխանատու չէ կարող լինել եւրոպացիների ապահովութեան համար, եթէ եւրոպական պետութիւններից մէկի զրաքերը Եգիպտոս ուղարկուին։ Այդպիսի զորքը եւրոպացիներին վատնդի կենթարկէ և կարող է ընդհանուր կոտորածի պատճառ դառնալ։ Եթէ Թիւրքայ զօրքեր ուղարկուին Եգիպտոս, Արաբի-բէյ մտադիր է նրանց ընդդիմադրել 5000 եգիպտական զօրքերով։ Բեմինդոտնի հրացաններով զինուորված, բացի 150,000 բէյզուններից, որոնք նոյնպէս կը պատերազմեն օտարների դէմ։ Եգիպտական հարցը դեռ ևս անորոշ դրութեան մէջ է։ Անգլիան և Ֆրանսիան չեն կամենում զինաւորված միջամտութիւն գործել և այդ բանը թիւրքային էլ չեն թոյլ տալիս։ Հաւանական է, որ եգիպտական կառավարութիւնը ինքնիշխանաբար կարգի կը բերէ իր ներքին գործերը, չը վնասելով եւրոպական պետութիւնների շահերին։

Փարիզի մէջ լուր էր տարածվել, իբր թէ ֆրանսիական մի զօրաբաժին պէտք է ուղարկվի Եգիպտոս։ Այդ լուրը հերքվեցաւ մի քանի լրագիրներից, որոնք եգիպտական հարցը վերջացած են համարում։ Թեղիվի դէմ ապստամբած օֆիցերները Կայիրէի մէջ անուանի անձինքներից մի ժողով կազմեցին երկրի պէտքերը քննելու համար, խոստանալով ենթարկվել այդ ժողովի մեծամասնութեան վճռին և օրինական ճանապարհով գործել։ Ժողովը օֆիցերների մի քանի պահանջները չափազանցված համարից, բայց խոստովանեց, որ մի քանի վերանորոգութիւններ անհրաժեշտ են և իր վրա առաւ պատասխանատուութիւն զօրքերի հանգստութեան համար, եթէ այդ վերանորոգութիւնները իրագործվին։ Թէպէտ սպանով չեն վերջանայ եգիպտական դժուարութիւնները, բայց Ֆրանսիական լրագիրները այդքանով էլ գոհ են։

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսի մէջ տարածված լուրերի համեմատ անգլիական դեսպան լորդ Դիֆֆերին յայտնել է՝ Բ. Դրանը, թէ Անգլիան ոչինչ չունի թիւրքայ արշաւանքի դէմ Եգիպտոսի վրա, եթէ այդ արշաւանքը անհրաժեշտ կը լինի, բայց զորքերի դրութիւնը Եգիպտոսի մէջ դեռ ևս կարօտ չէ այդպիսի միջոցի։

Թեղիվի մայրաքաղաք Կայիրէի մէջ ապստամբութիւն է ծագել, որ սպառնում է ցեմբիկ-փաշային գահընկեց անել։ 4,000 եգիպտական զինուորներ 30 թնդանօթներով շրջապատել են թեղիվի պալատը, պահանջելով, որ բոլոր մինիստրները հրաժարական տան։ Դեռ ևս ապստամբութեան իսկական պատճառները յայտնի չեն։ Կայիրէի մէջ շատ անգամ պատահել են անշան ապստամբութիւններ, որոնց պատճառը օֆիցերների և զինուորների անբաւականութիւնն է եղել պատերազմական մինիստրի դէմ։ Թեղիվը շատ անգամ խոստացել է փոխել պատերազմական մինիստրին, բայց մինչև այժմ չէ կատարել իր խոստմունքը։ Վերջին ապստամբութեան պատճառն էլ այդ է եղել։ Մի քանիսը կարծում են, որ ապստամբութիւնը կազմակերպել է գահընկեց խեդիվ Իսմայիլ-փաշա։ Մինչև այժմ ապստամբները ձեռնամուխ չեն եղել եւրոպացիների կեանքին և կեանքին։ Ապստամբած գունդերը բացի մինիստրներին փոխելուց պահանջում են սահմանադրութիւն։ Երբ նոր զօրքեր եկան ապստամբներին զսպելու համար, խեդիվը անձամբ նրանց համոզում էր չը միանալ ապստամբների հետ, բայց նրա ասածները ի զուր էին և այդ զօրքերն էլ միացան ապստամբների հետ։ Դրանից յետոյ կանչվեցաւ անգլիական հիւպատոսը, որ յանձն առաւ միջնորդութիւն խեդիվի և ապստամբների առաջնորդ Արաբի-բէյի մէջ։ Հիւպատոսը առաջարկեց ապստամբների պահանջները ներկայացնել Թիւրքայ կառավարութեան քննութեանը այն պայմանով, որ խեդիվը կհրաժարվի նրանց, եթէ կը ստանայ Բ. Դրան հաւանութիւնը։ Այդ առաջարկութիւնը ընդունվեցաւ, իսկ խեդիվը իր կողմից խոստացաւ փոխել մինիստրութիւնը։ Ապստամբ զօրքերը շուտով հեռացան։

Եգիպտական կառավարութիւնը օտար պետութիւնների հիւպատոսներին մի շրջաբերական ուղարկեց, որով նա խոստանում է պահպանել հանգստութիւնը և կարգը։ Ալէքսանդրիայից նոր զօրքեր են եկել և նրանց յանձնված է Արգինի պալատի պահպանութիւնը։ Հաւատացնում են, որ խեդիվը բնակվելու համար Ալէքսանդրիա կը տեղափոխվի։ Անգլիական լրագիրները հաղորդում են, որ իտալական կառավարութիւնը առաջարկել է մի կօնֆերենցիա կազմել եգիպտական հարցը քննելու համար։ Փարիզի մէջ այդ առաջարկութեան մասին դեռ ոչինչ յայտնի չէ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՁԱՅՆԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 սեպտեմբերի։ «Правительственный Вѣстникъ» լրագիրը հաղորդում է. Կրասնօսելսկայա սկզբնական ժողովրդական ուսումնարանին, որ ընդունված է Թագուհու հովանաւորութեան տակ, թոյլ է տրված Մարիամեան անուանվել։ Պետական գործերի մինիստրի շրջաբերական մէջ յիշված են արտօնութիւնները, որոնք տրված են գիւղացիներին պետական անտառներ գնելու ժամանակ։ Գիւղացիները գրամական գրաւականները կարող են փոխարինել համայնքի վճռներով, գնողների փոխադարձ ապահովութեամբ և յուսալի տանտէրերի առանձնական ապահովութեամբ։ „Agence Russe“ հաղորդում է. մինիստրների մանաժողովը վճռեց մտցնել ակցիզային հաղորդագրութիւն։ Գիւղացիների հողերի յետ գնելու վճարի փոքրացնելը կը ներկայացնվի պետական խորհուրդին։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. Երէկ կայացաւ կրօնշատի մէջ բարձրագոյն նաւախաց թագուհու և մեծ իշխանների ներկայութեամբ։ Նաւախաղը 7 ժամից աւելի տևեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 62½ կ., երկրորդ 93 ր., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 85½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 220 ր. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 25½ կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 25 կ., ոսկի 7 ր. 64 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 25,94 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը շատ հանգիստ է։

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

գործին։ Մեր վաճառականներից չատերը մինչև անգամ գանգատվում են, որ տէրութիւնը իբր թէ մի վատ կարգադրութիւն է արել, թոյլ չը տալով մասնաւոր մարդիկներին, վաճառականներին գիւղեր գնելու, այսինքն, այնպիսի հողեր, որտեղ գիւղական տուրքեր կան,—այլ միայն հասարակ հողեր։ Մինչդեռ ասում են այդ գանգատողները, ամենամեծ եկամուտ, գեալուր ուղղը գիւղական հողերն են։—մի խօսքով ոչ այնքան հողը, որքան մշակը։

Բայց ընթերցողի հետ փոքր ինչ խօսենք այն քանի վրա թէ արդեօք կալուածատէրոջ բողոքը—արդարացի բողոք է, և թէ հասարակութիւնը, ամբողջ ազգաբնակութիւնը, մի որ և է վնաս ունեն այդ գործում, թէ գուցէ ընդհակառակն մի մեծ օգուտ խնդիրը չատ պարզ է։ բայց ինչ պարզ բան հարկադրված չէ լինում մարդս բացատրելու։ Երբ մարդկային օգուտները միմեանց են հանդիպում, այն ժամանակ ամենահասարակ նշմարութիւնները—բաղադրվում, խճճվում և աղաւաղվում են, այն ժամանակ, ինչպէս ասում է մի գրող, երկու անգամ երկուսի վրա խնդիր է յարուցվում թէ արդեօք 2×2 չէ կարող կազմել 3 կամ 5, նայած որը աւելի շահաւէտ է։

Դիցուք մի տեղ ժողովված է մարդիկների մի խումբ, որ բաժանված է, ասենք, հինգ դասակարգի։ Առաջին դասակարգը ունի 1,000 բուբլանոց հարստութիւն, երկրորդը—10,000 բուբլանոց, երրորդը—գոբարաններ և արհեստանոցներ, չորրորդը—հողեր, ու կալուածներ, հինգերորդը զանազան տներ և շինութիւններ և այլն։ Ամբողջ խումբը, միասին դումարած, ունի մի մեծ հարստութիւն, որ կարող է հիմք համարվել այդ խմբի գործունէութեան համար։

Այժմ երեսակայենք թէ առաջին դասակարգը չէ 1,000 բուբլանոց հարստութիւն ունեցողը, այլ երրորդը. իսկ գոբարաններ ունեցողը դարձել է առաջին դասակարգը։ Նոյնպէս, ասենք թէ, երկրորդ դասակարգը հող ու կալուածքի տէր է դարձել, իսկ չորրորդը 10,000 բուբլի գրամի տէրը։ Հարցնում եմ այժմ—ամբողջ խումբը արդեօք մի որ և է օգուտ կամ վնաս ունի ստացած այդ փոփոխութեամբ։ Նրա ընդհանուր հարստութեան մեծութիւնը մնում գրաւնով կայայլվիս—Հաւանական է, որ հարստութեան ամբողջ համագումարը մի և նոյնը կը մնայ։ իսկ դասակարգերի փոփոխվելը թէև նոյն իսկ դասակարգերից մէկին կը բարձրացնի, միւսին կը քաշացնի, բայց ընդհանուր խմբի վերաբերմամբ ոչինչ նոր բան չի անի։

Բայց այստեղ կարող է պատահել, որ դասակարգերի միմանց անցնելուց, գրամը, զորօրինակ, կընկնի կալուածատէրի ձեռքը, որ անընդունակ կարող է դուրս գալ գրամական գործունէութեան մէջ։ իսկ հողն էլ ընկնելով նախկին գրամատէրի ձեռքը կարող է անգործ մնալ։ Բայց կարող է բոլորովին հակառակը լինել, որ այժմեան անընդունակ գրամատէրին կը փոխարինէ ընդունակը, իսկ երկրագործութեան վրա հոգ չը տանող կալուածատէրի տեղը կը բռնէ եռանդոտ և խելացի երկրագործը։

Այդ երկու պատահմունքներն էլ չատ հեշտութեամբ կարող են լինել։ ուստի դասակարգերի և ստացուածքների մէջ կատարվող շարժումը կարող է ապագայում և լաւ և վատ հետեւանք ունենալ։ Աւելացնենք և հետեւեալ դատողութիւնը։ Դիցուք թէ առաջին դասակարգից մի մարդ սաստիկ հարստացաւ, իսկ ընկերները աղքատացան։ Նոյնպէս կալուածատէրերից մէկը այնքան այժ ստացաւ, որ գնեց միւս մնացած կալուածատէրերի հողը և առաջվայ տասն կալուածքից մի մեծ կալուածք շինեց։—ձիշդ է և այդ դէպքում թէև ամբողջ խմբի հարստութիւնը առանձին մի փոփոխութիւն առաջին անգամից գուցէ և չի ստանայ, բայց խումբ կազմողների մեծամասնութեան դրութիւնը կը վատանայ։ Ուրեմն մի և նոյն խմբի մէջ ընդհանուր հարստութիւնը մի և նոյնը մնալով մարդկանց մեծ մասը կարող է շատ չաւարտ դառնալ։ Ինչն է աւելի զարհուրանք։ մարդիկների ընդհանուր բարգաւաճութիւնը և միջակ հարստութիւնը, թէ մարդիկների մեծ մասի մէջ չբաւարարութիւն և մի փոքր մասում խոշոր հարստութիւնը։ Ուրիշ խօսքով ինչն է հասարակութեան հոգատարութեան առարկան—մարդը թէ գրամը։—Ի հարկէ մարդը և ի հարկէ վերադասելի է ընդհանուր բարեկեցութիւն և զարգացումը...

Դառնանք այժմ կովկասեան կալուածատիրական խնդրին։ Կալուածատէրին առաջարկում են հողը յանձնել գիւղացիներին և յետ կնալ։ Դրանով հասարակութիւնը ոչ թէ միայն վնաս չէ անում, այլ և անպին օգուտ է ստանում։ հողը անցնում է գիւղացիների ձեռքը—հինգական պատմական երկրագործի ձեռքը։ Եթէ գիւղացուն չը լինէին յանձնում, այլ գործին անտեղակ և անընդունակ մի դասի—այն ժամանակ հասարակութիւնը կարող էր անհանգիստ լինել և բողոքել։ բայց հողը այն մարդուն է տրվում, որ և այժմ կալուածատէրի հողի իսկապէս գին և նշանակութիւն ուղղն է։ Եւ փերջապէս այդ հողը կալուածատէրի հողը չէ, այլ նոյն իսկ գիւղացիներինը և եթէ պատմական ձախորդ հանգամանքները նրան կապել են կալուածատէրի իշխանութեան հետ—այժմ կապերը խզելուց՝ (էլ ինչ էք կամենում) գիւղացիները պարտաւորվում են հողի գինը վճարել կալուածատէրին, իբր թէ այդ հողը այն վերջինինը լինէր իր քրտինքով ստացած, իսկ գիւղացիները երէկ միայն երկնքից իջած լինէին այդ հողի վրա, իբրև օտար հիւրեր....

Հասարակական արդարութիւնը, ինչպէս վերև ասացինք, պատուիրում է հոգալ ընդհանուրի բարօրութեան վրա։ Ազատելով հարաւային գիւղացիներին մի քանի կալուածատէրերից ունեցած կախումից—հասարակութիւնը կազմում ընդհանուր ժողովրդական աշխատանքը, նրա ապագայ մտաւոր և բարոյական զարգացման գործը։

Այժմ, կարծեմ, ընթերցողը կը համաձայնի մեզ հետ, որ կալուածատիրական լայնանութիւնը ընդհանուր հասարակական ցաւակցութեան արժան չէ կարող համարվել։ Եթէ քաղաքի մարդիկների մեծ մասը, վաճառականները, մեծ ու փոքր բուրժուան ուրախութիւն չեն զգում գիւղացու ուրախութեան հետ միասին—գոնէ ցանկալի կը լինէր, որ իսկապէս անկեղծ ուրախացողների ձայները բարձրանային աւելի ու աւելի, որ գրականութիւնը թարգման հանդիսանար բուն ժողովրդական տրամադրութեան, որ նա պաշտպանէր ընդհանրական օգուտը, որ նա սրընդեղէր պատմական արդարութեան չատագովների խումբը աւելի ու աւելի ուժեղացնելու և ազդող լինելու համար։

Կը գայ ժամանակ և մեր ժողովուրդը այնքան կը զօրանայ, որ ինքը հրապարակաչէ իր օգուտների պաշտպանը կը հանդիսանայ, այն ժամանակ նա կը սկսի քրքրել և մեր օրերի թշուառ գրութիւնը, երբ հայ ինտելլիգենցիան—հասարակայ իրաւունքների բարոյական ներկայացուցչութիւնը—ամենալի կերպով լռում է և ելել ժողովրդական ցաւ ու հոգսերի մասին, երբ նրա իրաւարանը արհամարհում է եղել գիւղական իրաւունքների ուսումնասիրութիւնը և պաշտպանութիւնը... այն ժամանակ... բայց ինչ դատարկ մտիրարութիւն։

(Կը շարունակվի)